



Քաղաքացիության օրենք

Աւստրիական քաղաքացիություն կստացի՝

A. ծագումով կամ **B. Դիմումով**

A. Ծագումով

Ծնունդով Աւստրիայի քաղաքացի կը լինի՝

1. Ամուսնացած զոյգից ծնւած երեխան, որի ծնողներից մէկը Ավստրիայի քաղաքացի է:
2. Չամուսնացած զոյգից ծնւած երեխան, որի մայրը Ավստրիայի քաղաքացուհի է:
3. Չամուսնացած զոյգից ծնւած երեխան, երբ հայրը Ավստրիայի քաղաքացի է եւ երեխայի ծնվելուց հետո մինչեւ ութ շաբաթ ընդունէ հայրությունը / կամ նույն ժամանակաընթացքում արդէն որոշվել է դատարանի միջոցով:

Չամուսնացած զոյգից ծնւած երեխան կստանայ նաեւ քաղաքացիություն եթէ ծնողների ամուսնությունը վաւերացի:

B. Դիմումով

Աւստրիայի քաղաքացիություն ստանալու համար անհրաժեշտ են յետեւեալ հիմնական պայմանները

- **Աւստրիական հանրապետության** հետ համաձայնել, հասարակական հանգիստը, կարգ ու կանոնները չխանգարել եւ ոչ մի կապակցություն չունենալ տեռորիստական խմբերի հետ:
- **Օրենքով անբիժ** (չդատապարտուած, առանց պետական տուգանքների ինչպէս այս երկրում, այնպէս էլ արտասահմանում, առանց ծայրահեղ վարչական խախտումների):
- Աւստրիաում (կամ որեւիցէ եւրոպական երկրներում) **բնակւելու իրաւունքի արգելք** չունենալ:
- Մինչեւ հիմա ունեցած **քաղաքացիությունից** դուրս գալ, բացի նրանք որ իրենց համար անկարելի է:
- Բաւականաչափ **ապահով ապրուստի միջոց ունենալ** - վերջին 6 տարիների ընթացքում պէտք է նւագագոյն 36 ամսվա եկամուտի միջինը լինի թոշակառուների գումարի համարատասխան, որի վերջին 6 ամիսների ընթացքում եկամուտ ունենալը անհրաժեշտ է: **Բացառություն** կը կազմեն՝ հաշմանդամները, լուրջ հիվանդություն ունեցող անձերը, որոնք կարող են փաստել իրենց անառողջութիւնը (բժշկական փաստաթուղթով)
- **Ինտեգրացիայի օրենքի** համապատասխան **§ 7 Abs.2 Z 2 Գերմաներէն լեզվի** վկայագիր ներկայացնել (մակարտակ B 1), Իրավական եւ հասարակական կարգի արժեքների մասին գիտնելիքները ձեռք բերել):
- **Դեմոկրատական կարգի, Աւստրիայի պատմութեան եւ մարզերի պատմութեան մասին** հաստատագիր (քննությունով):
Դեմոկրատական կարգի, Աւստրիայի պատմութեան եւ մարզերի պատմութեան քննությունի պատրաստուելու համար կան գրություններ: Հարցումները կուղղւեն քանի մը պատասխաններով:

<http://www.staatsbuergerschaft.gv.at>

Բացառություններ՝ գերմաներէն լեզվի համար հաստատագիր պէտք չունեն այն անձեր, որոնք կարող են փաստել իրենց անառողջութիւնը: Գերմաներէն լեզվի մէջ յաջող դրրոցական երեխաները նոյնպէս ազատումեն են այս պատասխանատուութիւնից:

Դատելով - Աւստրիայի քաղաքացիություն կարող են ստանալ այն անձերը, յետեւեալ **հիմնական պայմաններով**:

1. Առանց սպասման ժամկետի:

a. քաղաքացիություն կստանան այն անձեր, որոնք 10 տարի շարունակ ունեցել են աստրիական քաղաքացիություն, բայց այն կորցրել են արտասահմանում գտնելու պատճառով:

b. Այն անձերը որոնք ունեն գիտական, տնտեսագիտական, գեղարվեստական եւ սպորտային բնագավառներում, սպասած **արտասուր կարողություններ**, եթե երկիրը **հետաքրքրություն** ունենայ այդ բնագավառների նկատմամբ (կը հաստատուեն **Աստրիական կառավարության** կողմից):

Այն անձերը որոնք ունեն **10 տարւայ օրինաւոր եւ անդադար երկրում բնակութեան իրաւունք** (որից **5 տարին ունեցել են մշտական կեցութեան իրաւունք**):

Իրաւունքով - Յետեւեալ անձերը կստանան Աստրիական քաղաքացիութիւն, վերը նշւած հիմնական պայմաններով:

1. Առանց սպասման ժամկետի

a. Դիմումով դիմած այն **անչափահաս եւ ամուրի** անձերը, որոնց ամենաքիչ **ծնողներից մէկը Աստրիական քաղաքացիութիւն** ունի (եթե մշտական կեցութեան իրաւունք, կամ ընդունւած փախստականի իրաւունք, կամ թե այստեղ ապրելու վկայագրի իրաւունք ունենայ):

b. Ավստրիացի քաղաքացիներու **անչափահաս որդեգրւած երեխաները**:

2. Անդադար 6 տարի բնակութեան իրաւունք ունեցող անձեր՝

a. B2 մակարդակով գերմաներեն գիտցողներ կամ երկարաժամկետ (առնվազն 3 տարի) անձնական ինտեգրման ապացույցներ:

b. **Աստրիական քաղաքացիների հետ ամուսնացած անձեր**, որոնք ամենաքիչ ապրում են 5 տարի միասին;

c. **Եւրոպական երկիրներից եկած քաղաքացիներ**;

d. **Աստրիայում ծնւածները**;

3. Իրաւալէս բնակութեան իրաւունքով ամենաքիչ 15 տարի (անդադար) Աստրիաի մէջ ապրած, մշտալէս անձնական եւ աշխատանքային ինտեգրիթ անձեր:

4. Աստրիայում ամենաքիչ 30 տարի (անդադար) գրանգւած անձեր:

Տարածումով (ընտանիքի անդամների վրայ) հետեւեալ անձերը կստանան Աստրիական քաղաքացիութիւն, վերը նշւած հիմնական պայմաններով:

1. Անչափահաս երեխաները (առանց ժամկետի):

2. Ամենաքիչ 5 տարի ամուսնացած անձեր / գրանցված ծույգերը , որոնք ապրում են միասին նոյն բնակարանում եւ 6 տարի օրինական բնակութեան իրաւունք ունեն:

Ուշադրութիւն!!!! Քանի որ վերի տեղեկութիւնները համառոտ գրւած են, Կը խնթրենք մանրամասութիւնները տեղեկանալու համար դիմեցէք **կառավարական մասնիներու** կամ **կազմակերպութիւններու**, եւ կը նշենք որ,եթե հանդերձ մեր ուշադրութեան, սխալներ գտնուեն, պատասխանատուութիւն չենք կրել:

Beratung für Männer und Frauen 1010 Wien, Hoher Markt 8/4/2 Tel: 01 712 56 04 http://www.migrant.at E-Mail: migrant@migrant.at	Beratung für Frauen 1010 Wien, Marc Aurel Straße 2a/6/2/10 Tel: 01 982 33 08 http://www.migrant.at E-Mail: migrantin@migrant.at
Diese Publikation wird aus Mitteln des Arbeitsmarktservice Wien und der Magistratsabteilung 17 gefördert	
	